ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԲՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2021

Հանրային հեռուստաընկերությունը 2020 թվականի վերջին ընդունել է ՓԲԸ-ի 5-ամյա զարգացման ռազմավարությունը, որի մի շարք ծրագրեր նախատեսված էին հենց 2021 թվականի համար:

Այնուամենայնիվ, 2021-ի սկզբում այդ ծրագրերի իրականացման մարտավարությունը մշակվում էր մի շարք խնդիրների և մարտահրավերների պայմաններում.

- Համավարակով և պատերազմով պայմանավորված՝ Հանրային հեռուստաընկերության արտադրության նվազում, սահմանափակ հեռուստացանց.
- Լսարանի որոշակի կորուստ,վարկանշային չափումներում Հանրային հեռուստաընկերությունը 2020 թվականին հասել էր 5-րդ հորիզոնական.
- 500 մլն դրամի չափով ֆինանսավորման կրճատում.
- Աշխատակազմի որոշ հատվածի հեռավար աշխատանքից վերադարձի ապահովման անհրաժեշտություն:

ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐ

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԱՅԻՆ ՎԱՐԿԱՆԻՇ

Առաջին ալիքը 3 կետով բարելավել է վարկանիշը չափումներում՝ բարձրանալով երկրորդ հորիզոնական, հատուկ նախագծերի և միջազգային ձևաչափերի ցուցադրության ժամանակ՝ առաջին:

Առաջին ալիքը Միջազգային հանրապետական ինստիտուտի կողմից (IRI) իրականացված հարցումներով անգամ ճանաչվել է տեղեկատվության ամենավստահելի աղբյուր:

2021 թ. Աժ արտահերթ ընտրությունների օրը Հանրային հեռուստաընկերությունը 28 ժամ անընդմեջ տրամադրել է ուղիղ հեռարձակում հատուկ միացումներով, ռեպորտաժներով և հարցազրույցներով: Հունիսի 20-ին Առաջին ալիքն առցանց հարթակներում և մուլտիպլեքսում առաջ է անցել բոլոր մրցակիցներից՝ զբաղեցնելով առաջին տեղը:

2021 թվականի դեկտեմբերի 31-ին Առաջին ալիքը հեռուստացանկում զբաղեցրել է առաջին հորիզոնականը, ընդ որում՝ օրվա մի քանի ամենադիտելի ժամերին. ընդհանուր հեռուստադիտման միջին ցուցանիշն աճել է 40.26%-ով: Օրվա ամենաբարձր վարկանիշը գրանցել է «Մեր բակը. 25 տարի անց» ֆիլմը:

ՀՌՀ՝

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի կողմից յուրաքանչյուր եռամսյակը մեկ իրականացվող, հանրապետական և մայրաքաղաքային սփռում ունեցող հեռուստաընկերությունների եթերում բարձր վարկանիշ ունեցող հեռուստածրագրերի վերլուծության արդյունքում այս տարի Առաջին ալիքը շարունակել է բարելավել եթերային վարկանիշը: Ստորև ներկայացնում ենք որոշ կարևոր ցուցանիշներ:

ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿ

ԹՈՔ ՇՈՒ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈՒՂՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ՇԱՐՔՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԵՐԵՔ ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆՆԵՐԸ ԶԲԱՂԵՑՐԵԼ Է ԱՌԱՋԻՆ ԱԼԻՔԸ՝

«Հարցազրույց Պետրոս Ղազարյանի հետ»

- «Հանրային քննարկում»
- «Սպասիր ինձ»

Վավերագրական ֆիլմերի շարքում ամենադիտված 10 հորիզոնականներից 7-ը զբաղեցրել են Հանրային հեռուստաընկերության արտադրանքները:

Գեղարվեստական ֆիլմեր անվանակարգում 10 հորիզոնականներից հինգը Հանրային հեռուստաընկերությամբ հեռարձակված ֆիլմերն են:

Մանկական ծրագրեր, հաղորդումներ, մուլտֆիլմեր անվանակարգում 6 հորիզոնական զբաղեցրել են Առաջին ալիքի հեռարձակած մուլտֆիլմերը:

ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿ

Թոք շոուների, քաղաքական, սոցիալական հաղորդումների շարքում ամենադիտված 10 հաղորդումներից 7-ը Հանրային հեռուստաընկերությանն են եղել՝ նաև գլխավորելով տասնյակը:

Պաշտոնական լրահոս անվանակարգում լավագույն 10 հորիզոնականներից 10-ն էլ զբաղեցրել է Առաջին ալիքը:

Սպորտ անվանակարգում առաջին հորիզոնականն է զբաղեցրել Հանրայինի հեռուստաընկերությամբ հեռարձակված «2021 թ. ծանրամարտի Եվրոպայի առաջնությունը»:

Լրատվական ծրագրերի շարքում երկրորդ հորիզոնականն է զբաղեցրել Առաջին ալիքի «Լուրերը»:

Վավերագրական ամենադիտված 10 ֆիլմերից 5-ը Հանրային հեռուստաընկերության հեռարձակած ֆիլմերն են:

ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿ

Լրատվական ծրագրերի շարքում երկրորդ հորիզոնականն է զբաղեցրել Առաջին ալիքի «Լուրերը»:

Թոք շոու, քաղաքական, սոցիալական ուղղվածություն ունեցող հաղորդումների շարքում 10-ից 7-ը Հանրայինի հաղորդումներն են:

Պաշտոնական լրահոս անվանակարգում ցանկը գլխավորել են Հանրային հեռուստաընկերության հեռարձակումները:

Վավերագրական ֆիլմեր անվանակարգում 9 հորիզոնական են զբաղեցրել Առաջին ալիքի հեռարձակած ֆիլմերը:

Մարզական տեսալսողական հաղորդումների շարքում Հանրայինի 5 հաղորդում հայտնվել է լավագույն տասնյակում:

Երաժշտական, երաժշտական ժամանցային հաղորդումների անվանակարգում առաջին երկու ծրագրերը Հանրայինինն են:

ՁՈՐՐՈՐԴ ԵՌԱՍՏՅԱԿ

Լրատվական ծրագրերի շարքում Հանրային հեռուստաընկերության «Լուրեր»-ը լավագույն տասնյակում զբաղեցնում է երկրորդ հորիզոնականը:

Թոք շոու, քաղաքական, սոցիալական ուղղվածություն ունեցող հաղորդումների տասնյակում ներառված է Առաջին ալիքի 5 հաղորդում, իսկ ցանկը գլխավորում է «Հարցազրույց Պետրոս Ղազարյանի հետ» հաղորդաշարը:

Վավերագրական ֆիլմեր անվանակարգում լավագույն 10–ից 7-ը Առաջին ալիքի արտադրանքն են:

Գեղարվեստական ֆիլմեր անվանակարգում տասնյակը գլխավորում է «Մեր բակը. 25 տարի անց» ֆիլմը, իսկ լավագույն տասնյակում ներառված են Առաջին ալիքով ցուցադրված ևս երկու ֆիլմ:

Մարզական տեսալսողական հաղորդումների շարքում Հանրային հեռուստաընկերությունը զբաղեցնում է 10-ից 5 հորիզոնական:

Երաժշտական հաղորդաշարերի շարքում Հանրային հեռուստաընկերությամբ հեռարձակված «Մանկական Եվրատեսիլ» երգի միջազգային մրցույթը գլխավորում է լավագույն տասնյակը, իսկ 10-ից 6-ը Առաջին ալիքի հեռուստաարտադրանքն են:

Մանկական հաղորդաշարեր, տեսալսողական հաղորդումներ և մուլտֆիլմեր անվանակարգում լավագույն տասնյակից 6-ը Հանրային հեռուստաընկերությամբ ցուցադրված մուլտֆիլմերն են, որոնցից 4-ը գլխավորում են ցանկը:

ՀԵՌՈՒՍՏԱԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Կրկնապատկվել է ընդհանուր հեռուստաարտադրությունը, այդ թվում՝ ներքին. նույն ռեսուրսով Հանրայինն ավելի շատ արտադրանք է թողարկում:

Արտապատվիրակվող հաղորդումներ արտադրողների հետ բանակցությունների արդյունքում ավելացվել է այդ հաղորդումների քանակը՝ առանց հավելյալ ծախսի:

2019 թվականի համեմատ 2021 թվականին եթերացանցը փոփոխվել է 70%-ով:

Թարմացվել է սփյուռքահայ լսարանի համար նախատեսված Առաջինի արբանյակային ալիքը. հեռուստացանցը էականորեն բարելավվել և արդիականացվել է:

2021 թվականին եթեր է հեռարձակվել մարզական 3 նոր հաղորդում՝ «Առաջին սպորտ», «Խաղից դուրս Քալանթարյանի հետ», «Լրացուցիչ ժամանակ»:

Նույն տարում արտադրվել է գործարար կրթությանը միտված 3 նոր հաղորդում՝ «Խելացի գյուղատնտեսություն», «ԳործԱրար», «Գաղափարից բիզնես»:

Արտադրվել են ճանաչողական-ուսուցողական բնույթի նոր ձևաչափեր՝ «Քեզ համար, Հայաստան», «Այստեղ և հիմա», «Արվեստագիտության լսարան», «Մեդիագրագիտություն», «5 րոպե արվեստ», «Ճանապարհի դեպի թանգարան», «Հնչում է Հայաստանը»:

Արտադրվել են ժամանցային ուղղվածության նոր նախագծեր, որոնք ապահովել են բարձր դիտողականություն՝ «Մեր օրերի երգը», «VELO MP3», «Դիմակահանդես», «Հազար ու մի հարց», «Առավոտ լուսո weekend», «Նոն ստոպ Live»: «Առավոտ լուսոն» համալրվել է բենդով , որը ուղիղ եթերի ողջ ընթացքում ապահովում է հաղորդաշարի երաժշտական ձևավորումը կենդանի հնչողությամբ:

Առաջին ալիքի եթերացանցում զգալիորեն ավելացել է արխիվային հեռուսատաարտադրանքի ծավալը, ինչը միտված է Հանրայինի ոսկե ֆոնդում պահպանված բացառիկ նմուշները հեռուստադիտողին հասանելի դարձնելուն: Հեռուստաընկերության կողմից թվայնացված հարուստ տեսադարանի լավագույն հատվածները տեղ են գտնում «Մեր արխիվը», «3-րդ ալիք. ռետրո» և «Առավոտ լուսո» հաղորդաշարերի շրջանակներում:

2021 թվականին Հանրայինը միջազգային չափանիշներով և միջազգային խորհրդատվությամբ կազմակերպել է 4 նախընտրական մեծ հեռուստաբանավեճ Հայաստանում կառուցված ամենամեծ տաղավարում և 3 ՏԻՄ բանավեճ:

Հանրային հեռուստաընկերությունը նոր եթերաշրջանում բացառիկ ցուցադրման իրավունքով հեռարձակել է BBC-ի փաստավավերագրական ֆիլմերի շարքը հայերեն կրկնօրինակմամբ: Նոր եթերաշրջանում Հանրային հեռուստաընկերությունը ցուցադրել է նաև դասական երաժշտության լավագույն կատարումները աշխարհահռչակ նվագախմբերի կատարմամբ, որոնք ձեռք են բերվել MEZZO TV-ից:

Հանրային հեռուստաընկերությունը «Ապրելու Արցախ» հիմնադրամի հետ համատեղ իրականացնում է «100 տուն Արցախում» նախագիծը, որի նպատակն է բնակարաններով ապահովել պատերազմի հետևանքով տեղահանված և տունը կորցրած արցախցիներին: Բնակավայրը կառուցվում է Ստեփանակերտից 16 կմ հեռավորության վրա գտնվող՝ Ասկերանի Դահրավ գյուղի հարևանությամբ: Դրամահավաքն ուղեկցվում է համանուն հաղորդաշարով, որի միջոցով հեռուստադիտողը հնարավորություն ունի հետևելու կառուցման ամբողջ ընթացքին:

Հանրային հեռուստաընկերության նախաձեռնությամբ պատրաստվել է «Հայաստանի գույները» հոլովակների շարք, որը միտված է Հայաստանի բոլոր մարզերի զբոսաշրջային ճանաչելիության բարձրացմանը:

Հայաստանում ամենամեծ տաղավարի ձևավորումից ու կառուցումից զատ, նախորդ տարի ձևափոխվել է 9 տաղավար, և զրոյից կառուցվել 4 նոր տաղավար:

2021 թվականի ընթացքում ձեռնարկվել է հայկական հեռուստատեսության 65-ամյա հոբելյանին նվիրված 10-ից ավելի միջոցառումների շարք Նոյեմբերի 28-ին տեղի ունեցավ ամփոփիչ գալա համերգը: Շոուն կրում էր «Վավերագրելով պատմությունը» խորագիրը. հանդիսատեսն ու հեռուստադիտողը վերհիշեցին հեռուստատեսության ստեղծման ու կայացման ճանապարհը՝ համապատասխան ժամանակագրական երաժշտական ձևավորմամբ: Հանրային հեռուստաընկերության առաջարկով ՀՀ կառավարությունը **նոյեմբերի 29-ն սահմանեց «Հեռուստատեսության աշխատողի օր»:**

Փարիզում տեղի ունեցած «Մանկական Եվրատեսիլ 2021» երգի միջազգային մրցույթում հաղթող ճանաչվեց Հայաստանի ներկայացուցիչ 14-ամյա Մալենան՝ «Քամի-քամի» երգով:
2022 թվականին «Մանկական Եվրատեսիլը» կհյուրընկալվի Հայաստանում. հյուրընկալ կազմակերպությունը Հանրային հեռուստաընկերությունն է:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

Հանրային հեռուստաընկերությունը հայկական ֆիլմարտադրությունը զարգացնելու երկարաժամկետ ռազմավարական նպատակի համատեքստում «Ծարմ հոլդինգի» հետ համատեղ արտադրել է «Մեր բակը. 25 տարի անց» ֆիլմը: Սա Հանրայինի համար առաջին համատեղ արտադրությունն էր, որը նաև ապահովել է ֆինանսական վերադարձելիություն և լրացուցիչ շահույթ:

2021 թվականի հունիսի 9-ից մեկնարկել է Առաջինի լրատվական ալիքը՝ շուրջօրյա լրատվությամբ: Թղթակիցները օպերատիվ և բազմակողմանի տեղեկություն են տրամադրում Երևանից, Հայաստանի մարզերից, Արցախից և աշխարհի 10 քաղաքներից: Առաջինի լրատվական ալիքը հասանելի է սոցիալական բոլոր հարթակներում, վերգետնյա մայրաքաղաքային հեռուստացանկում, ինչպես նաև մալուխային ծրագրերով՝ Ucom, Rostelecom, BeeTv և այլն: «Լուրեր» լրատվական թողարկումը եթեր է հեռարձակվում ամեն գլխաժամի, ինչին հաջորդում են Լուրերի հավելվածները՝

1. Տնտեսական լուրեր
2. Սոցիալական և առողջապահական լուրեր
3. Գիտության և կրթության լուրեր
4. Մշակութային լուրեր
5. Միջազգային լուրեր
6. Արևմտահայերեն լուրեր
7. Հայտարարագիր
8. Խոշոր հարկատուներ
9. Կորոնա թվեր
10. Նոր ծնունդներ
11. Սպորտային լուրեր
12. Հարևաններ
13. Խաղացանկ
14. ՖոտոReport
15. Առանց մեկնաբանության
16. Ընթացք

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

1. Հարցազրույց Պետրոս Ղազարյանի հետ
2. Հարցազրույց Աստղիկ Սարգսյանի հետ
3. Տարբեր կարծիքներ Աննա Դանիելյանի հետ
4. Չքաղաքականացնել Անուշ Մուրադյանի հետ
5. Բաց հարթակ
6. Հանրային քննարկում
7. Արևմտահայերեն ամփոփիչ լուրեր
8. Ընկերները
9. Հարցազրույց
10. 911-ԱԻՆ
11. Այլ լուրեր
12. Այլ հայացք
13. Մեդիագրագիտություն
14. Մեր ժամանակի հերոսը
15. Ամբիոն
16. ՀՀ Կառավարություն

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՓԱԹԵԹՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ

2021 թվականի ընթացքում մշակվել են մի շարք կարևոր ռազմավարական ծրագրերի իրականացման փաթեթներ, գծագրվել ճանապարհային քարտեզներ:

2021 թվականին Հանրային հեռուստատեսությունը մշակել է «Թվային Հանրային» ծրագիրը, որը նախատեսում է օգտագործել նոր թվային տեխնոլոգիաները և ցանցային հնարավորությունները հաղորդումները Սփյուռքում և Հայաստանում որակյալ տարածելու, ինչպես նաև արդիական թվային գործիքները լայնորեն կիրառելու համար: Արբանյակային կապուղիներից աստիճանաբար անցում կկատարվի դեպի ցանցային տեխնոլոգիաներ (Հյուսիսային Ամերիկա, այնուհետև եվրոպական և ասիական ծածկույթ):

Հանրային հեռուստաընկերությունը ձեռնամուխ է եղել «Հայֆիլմ» կինոստուդիայի տարածքում «Կինոքաղաք» ստեղծելու գործին, ինչը կխթանի ոչ միայն տեղական ֆիլմարտադրության զարգացումը, այլև կդառնա սիրված ժամանցի վայր ներքին և ներգնա զբոսաշրջիկների համար:

Հանրային հեռուստաընկերության կողմից մշակվել է սպորտային ալիքի ծրագիր: Զուգահեռաբար բանակցություններ են տարվում նաև ԿԳՄՍ նախարարության հետ. այժմ քննարկվում է հեռուստաալիքը ֆինանսավորելու հնարավորությունը:

Հանրային հեռուստաընկերությունը 2022-2025 թվականների համար մշակել է տեխնիկական վերազինման եռամյա ծրագիր, որի շրջանակում նախատեսվում է արմատական փոփոխություններ կատարել և բարելավել հեռուստաընկերության տեխնիկական հզորությունները: Ծրագրի առաջնային նպատակն է կատարել հիմնական և ամենամեծ նկարահանման տաղավարի և սարքասրահի (ԱՍԲ 1) արմատական փոփոխություն, վերազինում, տարածքի վերանորոգում, ինչպես նաև մյուս տաղավարների ընթացիկ տեխնիկական վերազինում: Ծրագրում ներառված է նաև հեռուստատեսության համար անհրաժեշտ այլ արդիական տեխնիկական միջոցների թարմացումը:

Հանրային հեռուստաընկերությունը 2021 թվականին ստեղծել է միջազգային վաճառքների բաժին: Կինոարտադրանքի արտահանումը նոր ուղղություն է Հայաստանի համար: Տեղական արտադրողների արտադրանքը կհայտնվի արտասահմանյան էկրաններին՝ Առաջին ալիքի համար ներգրավելով լրացուցիչ ֆինանսական միջոցներ:

2021 թվականի նոյեմբերին ամսին կնքվել է հայ-չինական համաձայնագիր, ըստ որի՝ Հայաստանի հանրային հեռուստատեսությունում նոր մասնաշենք և տաղավար կկառուցվի: Նախագծի իրականացման համար Չինաստանը 15 մլն դոլարից ավելի գումար է հատկացրել: Նոր մասնաշենքը լինելու է անկախության շրջանում Հանրային հեռուստաընկերության առաջին նոր արտադրական ենթակառուցվածքը:

ՄԵԴԻԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ

2021թ. Հանրային հեռուստաընկերությունը նախաձեռնել է Առաջին ալիքի Մեդիա ակադեմիայի ստեղծումը: Ընդունելություն է հայտարարվել երեք մասնագիտություններով՝ լրագրություն, սպորտային լրագրություն և հաղորդավարական արվեստ: 3000 դիմորդից ընդունվել է 100 ուսանող, որոնք մեդիակրթություն են ստացել ոլորտի լավագույն մասնագետների մոտ, 30-ը աշխատանքի են անցել Հանրային հեռուստաընկերությունում, 25-ը՝ առաջատար ԶԼՄ-ներում:

Նոյեմբերին մեկնարկել են նաև «Հետկադրային ձայն և կրկնօրինակում» մասնագիտացմամբ դասընթացները: 800 դիմորդներից ընդունվել է 34 ուսանող:

Օգոստոսին Արցախում ևս բացվել է Մեդիա ակադեմիայի մասնաճյուղ, որտեղ 80 դիմորդներից ընդունվել է 60 ուսանող՝ հեռուստալրագրություն մասնագիտությամբ:

Մեդիակրթության զարգացման շրջանակում Հանրայինը համագործակցություն է սկսել հայաստանյան բուհերի հետ՝ իրականացնելով մասնագիտացված համատեղ դասընթացներ, գիտաժողովներ՝ նաև տրամադրելով տեխնիկական աջակցություն: Հուշագրերի շրջանակում բուհերի ուսանողներն իրենց արտադրական պրակտիկան անցնում են Հանրայինում:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԵԴԻԱՅԻ ԴԻՆԱՄԻԿԱ

Հանրային հեռուստաընկերության յութուբյան 2 էջերը ստացել են YT Partner-ի կարգավիճակ, 6 ամսվա ընթացքում գեներացվել է շուրջ 75000 ԱՄՆ դոլարի եկամուտ: Ընդհանուր տարեկան դիտումները հասնում են շուրջ 67.5 միլիոնի Առաջին ալիքի էջում և 135.2 միլիոնի՝ Առաջինի լրատվական ալիքում:

2021 թվականին զգալիորեն բարելավվել են Հանրային հեռուստաընկերության և լրատվական ծառայության սոցիալական ցանցերի ցուցանիշները:

- Առաջինի ալիքի ֆեյսբուքյան էջի հավանումներն ավելացել են շուրջ 15.6%-ով, իսկ հետևորդները՝ 25%-ով,
- Առաջինի ալիքի ինստագրամի հետևորդներն ավելացել են 36.7%-ով,
- Առաջինի ալիքի յութուբյան ալիքինը՝ 19%-ով,
- Առաջինի լրատվական ալիքի ֆեյսբուքյան էջի հավանումներն ավելացել են շուրջ 20%-ով, իսկ հետևորդները՝ 22%-ով,
- Առաջինի լրատվական ալիքի յութուբյան էջի հետևորդներն ավելացել են 80%:

Հեռուստաարտադրության ծավալների աճին զուգահեռ, Առաջին ալիքում առաջացել է տեխնիկական և արտադրական հզորությունների անհամապատասխանություն, ինչը խոչընդոտում է հեռուստաընկերության նպատակների իրագործմանը:

Ուստի 2021 թվականը Հանրային հեռուստաընկերության համար, ընդհանուր առմամբ, նախապատրաստական և տեխնիկական հնարավորությունների թեստավորման ու ախտորոշման տարի էր, որի արդյունքում Հանրայինը 2022 թ. կսկսի տեխնիկական համալրման ծրագիրը, ինչը հրատապ անհրաժեշտություն է հեռուստաընկերության հետագա զարգացման և արտադրական ծավալների ավելացման համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԼԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

2021